



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՈՐՈՇՈՒՄ


” 12 ” մարտ 2011 թ.

թիվ 09-Ա

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՆԵՐԻ (ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ
ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

հաստատել «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի ընթացքում տների (շինությունների) և գյուղական համայնքների ցուցակների կազմման և ընդունման կարգի մասին ցուցումները»՝ համաձայն հավելվածի:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության
վիճակագրության պետական խորհրդի
2011 թվականի մարտի 12-ի թիվ 09 -Ա որոշման

Հայաստանի Հանրապետության
2011 թվականի մարդահամար

Ց ՈՒ Ց ՈՒ Մ Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՏՆԵՐԻ (ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ԵՎ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ
Կ Ա Ջ Մ Մ Ա Ն Ե Վ Ը Ն Դ ՈՒ Ն Մ Ա Ն
ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Մարդահամարի նախապատրաստման հիմնական աշխատանքներից է քաղաքներում և խոշոր գյուղերում (հինգ հազար և ավելի բնակչությամբ) տների (շինությունների), գյուղական համայնքներում բնակավայրերի (այդ թվում՝ դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի) և դրանցում տնային տնտեսությունների ցուցակների կազմումը: Տների (շինությունների) և գյուղական համայնքների ցուցակներն **անհրաժեշտ են**.

1) քաղաքների և գյուղերի տարածքն ըստ հաշվային, հրահանգչական և մարդահամարի տեղամասերի սահմանագատելու,

2) մարդահամարի ընթացքում բնակչության ընդգրկման ամբողջականությունն ապահովելու և կրկնակի հաշվառումը բացառելու համար:

2. ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստման, անցկացման, տվյալների մեքենայական մշակման և ելքային աղյուսակների ստացման աշխատանքների ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հատուկ ընտրված և հրահանգավորված ցուցակագրողների կողմից Հայաստանի Հանրապետության մարզերի քաղաքներում և խոշոր գյուղերում կազմվում են տների (շինությունների) ցուցակները, իսկ Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքներում գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարը Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱՎԾ) մարզային գործակալության (համապատասխան տարածքային բաժնի) օժանդակությամբ կազմում են **գյուղական համայնքների ցուցակները**:

3. Աշխատանքի կատարման ողջ պատասխանատվությունը կրում են ՀՀ ԱՎԾ մարզային գործակալությունների (համապատասխան տարածքային բաժինների) պատասխանատուները:

4. Բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները տների (շինությունների) ցուցակներում անհրաժեշտ է վերցնել բնակարանային ֆոնդի սեփականատերերի կամ նրանց լիազոր մարմնի գրանցման բնակարանային քարտերից, տնային գրքերից, իսկ գյուղական համայնքներում՝ գյուղական համայնքում տնային տնտեսությունների հաշվառման՝ **Ձև թիվ 1 համայնքի գրքերից**:

5. Քաղաքներում տների (շինությունների), գյուղական համայնքների ցուցակների կազմման, դրանց ընդունման և արդյունքների ամփոփման աշխատանքներն իրականացնելիս անհրաժեշտ է ղեկավարվել ՀՀ ԱՎԾ կողմից հաստատված **ցուցումներով և հրահանգներով**:

6. Սույն ցուցումները սահմանում են քաղաքներում տների (շինությունների), գյուղական վայրերում՝ գյուղական համայնքների ցուցակների կազմման, ընդունման, վերահսկման և ամփոփագրերի կազմման կարգը:

**II ՀՀ ԱՎԾ ՄԱՐԶԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
(ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ) ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՏՆԵՐԻ (ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԿԱԶՄԵԼԻՍ**

7. ՀՀ ԱՎԾ մարզային գործակալությունները տների (շինությունների) ցուցակների՝ **Ձև թիվ 1 քաղաքային և Գյուղական համայնքների ցուցակների՝** **Ձև թիվ 2 գյուղական** կազմման աշխատանքների նախապատրաստման և իրականացման ժամանակահատվածում պարտավոր են տարածքային բաժինների պատասխանատուներին **ապահովել** ցուցակագրողների վկայականներով, անհրաժեշտ քանակությամբ **Ձև թիվ 1 քաղաքային-Աղյուսակ 1, Ձև թիվ 1 քաղաքային-Աղյուսակ 2, Ձև թիվ 2 գյուղական-Աղյուսակ 1 և Ձև թիվ 2 գյուղական- Աղյուսակ 2** ցուցակների ձևաթղթերով:

8. Տարածքային բաժինների պատասխանատուները տների (շինությունների) ցուցակների և գյուղական համայնքների ցուցակների կազմման աշխատանքների նախապատրաստման և իրականացման ժամանակահատվածում պարտավոր են.

1) Քաղաքների սխեմատիկ հատակագծի վրա.

- ա. ստուգել բնակավայրի սահմանում (սխեմատիկ հատակագծի վրա նախօրոք թաղամասերի ու զանգվածների բաժանված) թաղամասերի ու զանգվածների հերթական համարակալման ճշգրտությունը,
- բ. քաղաքի տարածքը սահմանազատել ցուցակագրման տեղամասերի՝ ցուցակագրողի աշխատանքային նորմային համապատասխան:
- գ. մեկ ցուցակագրողի աշխատանքային միջին նորման սահմանված է երեսուն տուն/օր, իսկ աշխատանքներն անհրաժեշտ է կատարել մեկ ամսվա ընթացքում՝ սկսած 2011 թվականի մայիսի 2-ից:

Աշխատանքային նորման կարող է տատանվել՝ կախված թաղամասերի (զանգվածների) կառուցապատման բնույթից և դիրքից: Ցուցակագրման տեղամասերը կարող են ընդգրկել ամբողջական թաղամասեր (զանգվածներ) կամ դրանց մի մասը:

Տարբեր թաղամասերի (զանգվածների) մասերից ցուցակագրման տեղամասեր կազմել չի թույլատրվում:

2) Տների (շինությունների) ցուցակները կազմելու համար հավաքագրել ցուցակագրողներ և հրահանգավորել նրանց:

3) Ցուցակագրողներին ծանոթացնել իրենց տեղամասերի սահմաններին, ճշտելով դրանք՝ ցուցակագրման տեղամաս դուրս գալով:

4) Ցուցակագրողներին ապահովել ցուցակագրողի **վկայականներով**, տների (շինությունների) ցուցակների կազմման վերաբերյալ հրահանգներով, անհրաժեշտ քանակությամբ Ձև թիվ 1 քաղաքայինի (Աղյուսակ 1, Աղյուսակ 2) ձևաթղթերով:

5) Ցուցակագրողներին ապահովել ցուցակագրման տեղամասի սխեմատիկ հատակագծով, տվյալ տեղամասի բնակարանային ֆոնդի սեփականատերերի (համայնքների, համատիրությունների, հավատարմագրային և լիազորագրային կառավարիչների, այլ իրավաբանական անձանց, որոնք իրենց հաշվեկշռում ունեն բնակարանային ֆոնդ) հասցեների ցուցակով:

6) Անցկացնել յուրաքանչյուր ցուցակագրողի կազմած տների (շինությունների) ցուցակների հրահանգով պահանջվող դրույթներին համապատասխան լրացման (հատկապես աշխատանքի առաջին օրերին), ինչպես նաև դրանցում ամբողջականության ընդգրկման և ճշգրիտ ներառման ստուգումներ:

7) Ուշադրություն դարձնել, որ ոչ բնակելի տների (շինությունների) տվյալները ներկայացված լինեն տեղամասի տների ցուցակների Ձև թիվ 1 քաղաքային Աղյուսակ 1-ի 4-րդ սյունակում և դրանց մասին ծանոթություն տրված լինի նույն տողի աղյուսակի 9-րդ սյունակում:

8) Ցուցակագրման տեղամասերում շրջագայության ժամանակ ցուցակագրողների կողմից սխեմատիկ հատակագծերում կատարած փոփոխությունները պետք է անցկացնել սխեմատիկ հատակագծերի մյուս բոլոր օրինակների վրա:

9. Հրահանգավորել ՀՀ մարզերի գյուղական համայնքների ղեկավարների աշխատակազմի քարտուղարներին՝ համաձայն գյուղական համայնքներում բնակավայրերի (այդ թվում՝ դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի) և դրանցում տնային տնտեսությունների ցուցակների կազմման կարգի հրահանգի: Համաձայն վերջինիս՝

1) Գյուղական համայնքների ցուցակի (Ձև թիվ 2 գյուղական-Աղյուսակ 2) 1-ին սյունակում լրացվում է համայնքի մեջ գտնվող հիմնական բնակավայրի հերթական համարը, իսկ 2-րդ սյունակում՝ գյուղական համայնքի/գյուղական բնակավայրի կամ դրա տարածքում գտնվող այլ բնակատեղի անվանումը: 3-րդ սյունակում լրացվում է բնակելի միավորի հասցեն: Անհրաժեշտ է ստուգել նաև, թե մտցված են արդյոք այլ բնակատեղերի վերաբերյալ տեղեկությունները հիմնական բնակավայրերի վերաբերյալ տվյալների մեջ: 4-րդ սյունակում լրացվում է տնային տնտեսության առաջինը գրված անձի/գլխավորի ազանունը, անվան և հայրանվան սկզբնատառերը: 5-րդ սյունակում լրացվում է տնային տնտեսության կազմում ընդգրկված անձանց ընդհանուր թվաքանակը:

2) Ցուցակների կազմման ժամանակ բնակչություն չունեցող գյուղական բնակավայրերը նույնպես ներառվում են գյուղական համայնքների ցուցակների մեջ:

III ՀՀ ԱՎԾ ՄԱՐԶԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ) ՊԱՐՏԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՆԵՐԻ (ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐՆ ԸՆԴՈՒՆԵԼԻՍ

10. Ցուցակագրողներից և գյուղական համայնքների ղեկավարների աշխատակազմի քարտուղարներից տների (շինությունների) և գյուղական համայնքների ցուցակների ընդունումը կատարվում է ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային բաժինների պատասխանատուների կողմից՝ ցուցակագրողի կամ գյուղական համայնքների ղեկավարների աշխատակազմի քարտուղարների ներկայությամբ:

11. Տների (շինությունների) ցուցակների և գյուղական համայնքների ցուցակների ընդունման ժամանակ անհրաժեշտ է ստուգել.

1) Քաղաքների տների ցուցակների կազմման ճշգրտությունը՝ դրանցում բոլոր թաղամասերի, փողոցների, նրբանցքների,

հրապարակների և այլնի, տների ու շինությունների ընդգրկման ամբողջականությունը՝ համեմատելով դրանք քաղաքների սխեմատիկ հատակագծերի հետ, ինչպես նաև յուրաքանչյուր թաղամասի (զանգվածի) և ցուցակագրման տեղամասի հանրագումարների ճշգրտությունը,

2) **գյուղական համայնքների ցուցակներում** բոլոր գյուղական բնակավայրերի ընդգրկման ամբողջականությունը՝ ներառյալ գյուղական համայնքի տարածքում գտնվող ծառայողական նշանակություն ունեցող և ժամանակավոր կացատեղ հանդիսացող հիմնարկների, ինչպես նաև յուրաքանչյուր բնակավայրի վերաբերյալ գրանցումների և դրանց համարակալման ճշգրտությունը:

12. *Տների (շինությունների) ցուցակների ընդունման ժամանակ ուշադրություն դարձնել, որ.*

1) Ցուցակները պարտադիր կազմված լինեն ըստ առանձին թաղամասերի (զանգվածների) (**Ձև թիվ 1 քաղաքային Աղյուսակ 2**) Տների (շինությունների) ցուցակները փողոցներով կազմած կարելի է ընդունել միայն բացառիկ դեպքում, երբ քաղաքը կամ խոշոր գյուղը բաղկացած է մեկ կամ մի քանի զուգահեռ փողոցներից: Քաղաքների և խոշոր գյուղերի սահմաններում թաղամասերի (զանգվածների) համարակալումը լինի միասնական հաջորդական համարներով:

2) Ճշգրտված սխեմատիկ հատակագծի վրա յուրաքանչյուր թաղամասի (զանգվածի) համար կազմված լինի առանձին տների (շինությունների) ցուցակ (**Ձև թիվ 1 քաղաքային Աղյուսակ 2**) Թաղամասի (զանգվածի) համարը, ինչպես նաև ցուցակի հասցեամասում դրա սահմանների նկարագրությունը պետք է համընկնի սխեմատիկ հատակագծի հետ:

13. Յուրաքանչյուր թաղամասի (զանգվածի), տների (շինությունների) ցուցակը պետք է համեմատել հատակագծի հետ, ցուցակում գրված բոլոր տները (շինությունները) պետք է համապատասխանեն դրանց փաստացի առկայությանը, իսկ գրառման հերթականությունը՝ հատակագծի և տեղանքի վրա դրանց ճիշտ տեղաբաշխմանը: Ցուցակների կազմման ժամանակ պետք է անպայման հաշվի առնել սխեմատիկ հատակագծում կատարված բոլոր փոփոխությունները և ուղղումները:

14. Ցուցակագրողի կողմից հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները հատակագծի հետ, ինչպես նաև փողոցների անվանումների ու տների (շինությունների) համարանիշերի անճշտության վերաբերյալ բոլոր դիտողությունները հարկավոր է ճշտել համապատասխան կազմակերպություններում և ուղղումներ մտցնել ցուցակներում և հատակագծի վրա:

15. Ցուցակի յուրաքանչյուր էջում ստուգվում է տվյալների գրառման, տների (շինությունների), բնակարանների քանակի և բնակչության թվաքանակի ամբողջականությունն ու ճշգրտությունն ըստ հասցեների: Հատկապես պետք է ուշադրություն դարձնել ցուցակներում անկյունային տների (շինությունների) հաշվառմանը, որոնք պետք է գրվեն փողոցներից մեկում՝ այնտեղ, որտեղ տունը (շինությունը) պաշտոնապես նշվում է փոստային բաժանմունքում, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային բաժնում:

16. Յուրաքանչյուր տան (շինության) համար պարտադիր ստուգվում է բնակարանների քանակի և դրանցում բնակվող բնակչության թվաքանակի հարաբերակցությունը:

17. Տների (շինությունների) ցուցակների ընդունման ժամանակ պետք է ստուգել յուրաքանչյուր ցուցակի հանրագումարների ճշգրտությանը:

18. Յուրաքանչյուր թաղամասի (գանգվածի) հանրագումարները հաշվելիս տների (շինությունների) բնակարանների քանակի մասին տվյալներում ներառվում են նաև հիվանդանոցների, առողջարանների, հյուրանոցների, կայարանների և այլ հիմնարկների/կազմակերպությունների կողմից զբաղեցրած տները (շինությունները) և բնակարանները, իսկ բնակչության թվաքանակում ներառվում է միայն դրանցում մշտապես բնակվող բնակչությունը:

19. Տների (շինությունների) յուրաքանչյուր ցուցակ (Ձև թիվ 1 քաղաքային Աղյուսակ 2) ստուգելուց հետո ստուգվում է ցուցակագրողի կողմից Ձև թիվ 1 քաղաքային Աղյուսակ 1-ում դրանց հանրագումարների տեղափոխման ճշգրտությունը և ամբողջությամբ ցուցակագրման տեղամասի հանրագումարների հաշվարկները:

20. *Գյուղական համայնքների ղեկավարներից գյուղական համայնքների ցուցակներն ընդունելիս հարկավոր է ուշադրություն դարձնել*

բոլոր գյուղական բնակավայրերի, դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի և այնտեղ բնակվողների թվաքանակի հաշվառման ամբողջականությանը:

21. Ցուցակում բոլոր գյուղական բնակավայրերի գրառումների ամբողջականությունը ստուգելու համար, որպես վերահսկման աղբյուր, անհրաժեշտ է օգտագործել 2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ Ձև թիվ 9-Ս «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմի մասին» հաշվետվության տվյալները:

22. Տների (շինությունների) ցուցակների, գյուղական համայնքների ցուցակների հանրագումարներն ամբողջությամբ ըստ տարածաշրջանի (քաղաքային, գյուղական) հաշվելուց հետո, անհրաժեշտ է կատարել ցուցակում մտցված քաղաքային և գյուղական բնակչության թվաքանակի մասին տվյալների վերլուծություն:

23. Եթե բնակչության թվաքանակի տվյալների վերլուծության արդյունքում հայտնաբերվի տների (շինությունների) կամ գյուղական համայնքների ցուցակներում բնակչության թվաքանակի թերհաշվարկ (համեմատելով առկա այլ աղբյուրների հետ), ապա անհրաժեշտ է կազմակերպել կազմված ցուցակների վերստուգում:

24. Ցուցակներն ընդունելուց հետո հաշվարկվում են հանրագումարներն՝ ըստ քաղաքի և գյուղական համայնքների, այնուհետև ամբողջությամբ՝ տարածաշրջանի կտրվածքով: Տների (շինությունների) ցուցակներով՝ Ձև թիվ 1 քաղաքային, ստացված քաղաքային բնակչության և Ձև թիվ 2 գյուղականով ստացված գյուղական բնակչության թվաքանակներն անհրաժեշտ է համեմատել տվյալ տարածքի բնակչության հաշվարկային թվաքանակի տվյալների հետ: Էական տարբերությունների դեպքում անհրաժեշտ է պարզել դրանց պատճառը, և եթե դրանք առաջացել են ցուցակների ոչ ճիշտ կազմման հետևանքով, ապա պետք է կատարել այդ ցուցակների մանրագնին ստուգում և ուղղում:

25. Ցուցակները ստուգելուց և ընդունելուց հետո ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային բաժնի պատասխանատուները կազմում են ցուցակների տվյալների **ամփոփագրեր**:

26. ՀՀ ԱՎԾ կողմից սահմանված ժամկետում Ձև թիվ 1 քաղաքային՝ տների (շինությունների) ցուցակների և Ձև թիվ 2 գյուղականի ամփոփ

արդյունքները տարածքային բաժինների պատասխանատուները ներկայացնում են ՀՀ ԱՎԾ մարզային գործակալություն՝ **Ձև թիվ 3 ամփոփ** և **Ձև թիվ 4 ամփոփ** ձևաթղթերով:

27. «Քաղաքներում տների (շինությունների) ցուցակների տվյալների ամփոփագիրը»՝ **Ձև թիվ 3 ամփոփ**, կազմվում է բոլոր քաղաքների համար՝ ցուցակագրման տեղամասերի կտրվածքով, ըստ **Ձև թիվ 1 քաղաքային Աղյուսակ 1** տվյալների: 1-ին սյունակում քաղաքների գրառումները կատարվում են այբբենական կարգով:

28. «Գյուղական համայնքներում ցուցակների տվյալների ամփոփագիրը»՝ **Ձև թիվ 4 ամփոփ**, կազմվում է **Ձև թիվ 2 գյուղականի** հանրագումարային տվյալների հիման վրա: 1-ին սյունակում գյուղական համայնքները գրառվում են այբբենական կարգով: 2-5-րդ սյունակներում փոխանցվում են հիմնական բնակավայրերի հանրագումարները, ներառյալ դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի վերաբերյալ տվյալները:

29. Տների (շինությունների) ցուցակները, գյուղական համայնքների ցուցակները կազմվում են մարդահամարի նախապատրաստման համար և պահվում են ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային բաժիններում:

IV ՀՀ ԱՎԾ ՄԱՐԶԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՏՆԵՐԻ (ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐՆ ԸՆԴՈՒՆԵԼԻՄ

30. Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի նախապատրաստման, անցկացման, տվյալների մեքենայական մշակման և ելքային աղյուսակների ստացման աշխատանքների ժամանակացույցով սահմանված ժամկետներում ՀՀ ԱՎԾ մարզային գործակալությունները, ամփոփելով քաղաքներում տների (շինությունների) ցուցակների և գյուղական համայնքների ցուցակների մարզի վերաբերյալ տեղեկատվությունը համապատասխան ամփոփագրերում, տների (շինությունների) ցուցակների և **Ձև թիվ 2 գյուղականի** արդյունքները ներկայացնում են ՀՀ ԱՎԾ մարդահամարի վարչություն՝ ըստ **Ձև թիվ 5 ամփոփ** և **Ձև թիվ 6 ամփոփ** ձևաթղթերի:

31. «Քաղաքներում տների (շինությունների) ցուցակների տվյալների ամփոփագիրը»՝ **Ձև թիվ 5 ամփոփ**, կազմվում է տվյալ մարզի բոլոր քաղաքների համար ըստ **Ձև թիվ 3 ամփոփի**: 1-ին սյունակում քաղաքների գրառումները կատարվում են տարածքի կտրվածքով՝ ըստ այբբենական կարգի:

32.. «Գյուղական համայնքներում ցուցակների տվյալների ամփոփագիրը» **Ձև թիվ 6 ամփոփ**, կազմվում է տվյալ մարզի համար՝ ըստ **Ձև թիվ 4 ամփոփի**: 1-ին սյունակում գյուղական համայնքները գրառվում են տարածքների կտրվածքով՝ ըստ այբբենական կարգի:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ՏՆԵՐԻ
(ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԵՎ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝
ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՏԵՍՔՈՎ

ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ

քաղաքներում տների (շինությունների) ցուցակների և գյուղական համայնքների ցուցակների կազմման վերաբերյալ

Հ Ա Ր Ց	Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն
<p>Ինչպե՞ս տարածքը բաժանել ցուցակագրման տեղամասերի</p>	<p>Քաղաքի սխեմատիկ հատակագծին համապատասխան կազմել թաղամասերի (զանգվածների) ցուցակ՝ յուրաքանչյուրում նշելով տների (շինությունների) քանակը: Այնուհետև յուրաքանչյուր ցուցակագրողի համար ընտրել կից թաղամասերը (զանգվածները), որոնցում տների (շինությունների) հանրագումարը համապատասխանում է սահմանված ծանրաբեռնվածության նորմային: Թաղամասում (զանգվածում) և ամբողջությամբ տեղամասում տների (շինությունների) քանակը ցուցակագրողին չի հայտնվում: Սխեմատիկ հատակագծի վրա նշվում են միայն ցուցակագրման տեղամասի սահմանները:</p>
<p>Պահանջվում է արդյո՞ք ցուցակագրման տեղամասի մեջ մտցնել քաղաքի տարածքի ամայի և չբնակեցված տեղամասերը</p>	<p>Ցուցակագրողների միջև բաժանվում է քաղաքի ամբողջ տարածքը, այդ իսկ պատճառով ամայի և չբնակեցված տարածքները պետք է մտնեն համապատասխան ցուցակագրման տեղամասի կազմի մեջ:</p> <p>Ընդ որում, ցուցակագրողը պարտավոր է ստուգել, չկան արդյո՞ք ամայի տարածքների վրա կառուցվող կամ չբնակեցված բնակելի տներ (շինություններ), թեկուզ ժամանակավոր բնույթի, և մտցնել դրանք տների ցուցակներում:</p>
<p>Ինչպե՞ս ապահովել ցուցակագրողների տեղաբաշխումն ըստ տեղամասերի</p>	<p>Քաղաքների և խոշոր գյուղերի տարածքը սխեմատիկ հատակագծերի վրա ցուցակագրման տեղամասերի բաժանելուց հետո, հարկավոր է դրանք համարակալել հերթական համարակալմամբ:</p>
<p>Ինչպե՞ս կազմակերպել ցուցակների ընդունումը</p>	<p>Ցուցակագրողների մեծ թվաքանակի առկայության դեպքում նպատակահարմար է</p>

Հ Ա Ր Ց	Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն
<p>ցուցակագրողներից և գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարից</p>	<p>ցուցակների կազմումը, և հետևաբար, ցուցակների ընդունումը կազմակերպել ըստ ցուցակագրողների խմբերի, սահող գրաֆիկով, 2-3 օր տարբերությամբ: Նշված գրաֆիկը պետք է կազմվի այնպես, որ ամբողջ աշխատանքն ավարտվի սահմանված ժամկետներում:</p>
<p>Ինչպե՞ս կազմակերպել հսկողություն ցուցակագրողի աշխատանքի նկատմամբ</p>	<p>Առաջին օրն անհրաժեշտ է հանձնարարել ցուցակագրողներին, որպեսզի աշխատանքն ավարտեն սովորականից ավելի շուտ և հավաքվեն ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային բաժիններում, որպեսզի ստուգվի նրանց կողմից լրացված ցուցակների ճշգրտությունը: Այնուհետև անհրաժեշտ է վերլուծել թույլ տված սխալները, ցուցակագրողների մոտ առաջացած հարցերը և անհրաժեշտության դեպքում նրանց լրացուցիչ հրահանգավորել: Մնացած օրերին ցուցակագրողների աշխատանքները պետք է ստուգել ընտրանքային կարգով, որպեսզի ընդգրկվեն բոլոր ցուցակագրողները, պարտադիր ցուցակագրման տեղամաս դուրս գալու միջոցով:</p>
<p>Ինչպե՞ս ապահովել հսկողությունը աշխատանքի որակի նկատմամբ, ցուցակագրողներից և գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարից նյութերն ընդունելիս</p>	<p>Ցուցակագրողներից և գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարից նյութերի ընդունումը նույնպես կատարվում է ըստ սահող գրաֆիկի: Նյութերի ընդունումը հարմար է կատարել նրանց ներկայությամբ՝ երկուսով: Ցուցակների ընդունման ժամանակ հարկավոր է վերահսկել հետևյալը.</p> <ul style="list-style-type: none"> • Ցուցակագրողների կողմից ցուցակներում գրված յուրաքանչյուր թաղամասի (զանգվածի) տների (շինությունների) քանակը համեմատել Ձեր կողմից նախապես կազմված թաղամասերի (զանգվածների) ցուցակների տվյալների հետ: • Ցուցակներում գրված տները (շինութ-

Հ Ա Ր Ց	Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն
	<p>յունները) համեմատել սխեմատիկ հատակագծի վրա դրանց առկայության հետ:</p> <ul style="list-style-type: none"> • Բնակարանների քանակի և բնակչության թվաքանակի հարաբերակցությանը:
<p>Ինչպե՞ս օգտագործել հետազայում քաղաքների և խոշոր գյուղերի սխեմատիկ հատակագծերը, որոնցով ցուցակագրողները կազմել են տների ցուցակները</p>	<p>Ցուցակների կազմման ընթացքում քաղաքների և խոշոր գյուղերի ճշտված հատակագծերը օգտագործվում են մյուս օրինակների հետ համեմատելու և դրանցում ուղղումներ մտցնելու համար: Հետազայում դրանք պահվում են ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային գործակալության տարածքային բաժնի պատասխանատուի մոտ:</p>
<p>Բնակելի տանը ոչ-ոք չի բնակվում: Լրացվում են արդյո՞ք Ձև թիվ 1-քաղաքային-Աղյուսակ 2-ի 6-րդ և 7-րդ սյունակներն այդ տան համար</p>	<p>Եթե բնակելի տանը ոչ-ոք չի բնակվում, ապա Ձև թիվ 1-քաղաքային-Աղյուսակ 2-ի բոլոր սյունակները լրացվում են, իսկ 7-րդ սյունակում գծիկ է դրվում:</p>
<p>Ո՞ր փողոցում է ճիշտ գրանցել անկյունային տունը Ձև 1-քաղաքային-Աղյուսակ 2-ում</p>	<p>Անկյունային տունը նպատակահարմար է գրել այն փողոցում, որում տունը պաշտոնապես նշվում է փոստային բաժանմունքում և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության համապատասխան բաժնում:</p>
<p>Կարելի՞ է արդյոք կառուցվող տան համար Ձև թիվ 1-քաղաքային-Աղյուսակ 2-ի 3-րդ սյունակում գրել շինարարական համարը, եթե այն դեռ չունի փոստային համար</p>	<p>Եթե անհնար է պարզել կառուցվող տան փոստային համարը, Ձև թիվ 1-քաղաքային-Աղյուսակ 2-ի 3-րդ սյունակում պարտադիր պետք է գրել շինարարական համարը, 9-րդ սյունակում տալ ծանոթություն: Այնուհետև հարկավոր է պարզել և գրել տան փոստային համարը:</p>
<p>Որտեղի՞ց վերցնել տվյալներ ապօրինի շինությունում բնակվող բնակչության վերաբերյալ</p>	<p>Եթե չկա տնային գիրք, կամ այն գտնվում է բացիթողի վիճակում, բնակչության վերաբերյալ տվյալները ստացվում են տանտիրոջը հարցում կատարելու միջոցով:</p>

Հ Ա Ր Ց	Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն
<p>Եթե տների շրջագայության ժամանակ ցուցակագրողը պարզել է, որ թաղամասը փաստորեն բաղկացած է երկու թաղամասերից բաժանված նրբանցքով, որը նշված չէ հատակագծի վրա, ապա տները պետք է մտցնել մեկ, թե՛ երկու տարբեր ցուցակների մեջ</p>	<p>Այդ մասին ցուցակագրողը պետք է հայտնի ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային բաժին և կազմի երկու ցուցակ: Այդ դեպքում թաղամասի երկրորդ մասին տրվում է տառային համար, և նրբանցքը ցույց է տրվում հատակագծի վրա:</p>
<p>Ո՞ր ցուցակներում կգրվեն այն անձինք, ովքեր գրանցված են մի հասցեում, բայց փաստորեն բնակվում են մեկ այլ տեղ</p>	<p>Այդ անձինք կհաշվառվեն իրենց գրանցման (հաշվառման) բնակավայրի ցուցակներում:</p>
<p>Հարկավո՞ր է արդյոք, տների ցուցակներում մտցնել այն տները, որոնք ենթակա են քանդման կամ կապիտալ վերանորոգման, որոնցում ոչ-ոք չի բնակվում</p>	<p>Քանդման կամ կապիտալ վերանորոգման ենթակա, սակայն փաստացի գոյություն ունեցող տները մտցվում են տների ցուցակների մեջ:</p>
<p>Որտե՞ղ է հարկավոր գրել տների ցուցակների կազմման ժամանակ բաց թողնված տունը</p>	<p>Բաց թողնված տան վերաբերյալ տեղեկություններն անհրաժեշտ է գրել դրա նախորդ համարի տնից հետո (օրինակ, եթե բաց է թողնվել 5 համարի տունը, ապա դրա վերաբերյալ տեղեկությունները հարկավոր է գրել 3 համարի տնից հետո): Անհրաժեշտության դեպքում այդ ցուցակը պետք է արտագրել:</p>
<p>Ի՞նչ հերթականությամբ է պետք գրել գյուղական վայրերը՝ ըստ բնակչության թվաքանակի մեծության, թե՛ ըստ դրանց գտնվելու հաջորդականության</p>	<p>Առաջին հերթին գրվում է գյուղական համայնքի կենտրոնը, իսկ հետո գյուղական համայնքի մյուս բնակավայրերն՝ այբբենական կարգով:</p>
<p>Ինչպե՞ս գրել տների և</p>	<p>Դպրոցներին կից գիշերօթիկները մտցվում են</p>

Հ Ա Ր Ց	Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն
<p>գյուղական համայնքների ցուցակներում դպրոցներին կից գիշերօթիկները</p>	<p>տների ցուցակի՝ Ձև թիվ 1-քաղաքային-Աղյուսակ 2-ի 8-րդ սյունակում՝ նշելով ժամանակավոր տեղերի քանակը: 5-րդ սյունակում գրվում է բնակելի շինությունների քանակը: Եթե գիշերօթիկում մշտապես բնակվում է սպասարկող անձնակազմ կամ այլ անձինք, ապա 7-րդ սյունակում գրվում է այդ անձանց թվաքանակը: Գյուղական համայնքների ցուցակում՝ դպրոցին կից գիշերօթիկի ժամանակավոր տեղերի քանակը գրվում է Ձև թիվ 2-գյուղականի 11-րդ սյունակում, իսկ 10-րդ սյունակում՝ դրանցում մշտապես բնակվող բնակչության թվաքանակը:</p>
<p>Հարկավո՞ր է արդյոք ցուցակներում մտցնել հատուկ գիշերօթիկ դպրոցները (խուլ ու համրերի, կույրերի համար և այլն)</p>	<p>Բոլոր գիշերօթիկ դպրոցները, ներառյալ հատուկները (խուլ ու համրերի, կույրերի համար և այլն) գրվում են տների ցուցակներում այնպես, ինչպես սովորական գիշերօթիկ դպրոցները:</p>
<p>Հարկավո՞ր է արդյոք ցուցակներում մտցնել շարժական վագոնները, շինվերանորոգման գնացքները և այլն</p>	<p>Շինվերանորոգման գնացքները, շարժական վագոնները և այլն մտցվում են ցուցակների կազմման պահին՝ ըստ իրենց գտնվելու վայրի: Քաղաքներում և գյուղական համայնքներում դրանք ընդգրկվում են այն բնակավայրի ցուցակի մեջ, որին ավելի մոտ են գտնվում: Ընդ որում, յուրաքանչյուր վագոն դիտվում է որպես առանձին տուն:</p>
<p>Ինչպե՞ս պետք է ցույց տալ առկա տեղերի քանակը հյուրանոցներում, հիվանդանոցներում և նման այլ կազմակերպություններում</p>	<p>Հիվանդանոցների, հյուրանոցների, առողջարանների, հանգստյան տների և նման այլ կազմակերպությունների վերաբերյալ ցույց է տրվում առկա տեղերի առավելագույն քանակը (հաշվի առնելով ժամանակավոր տեղադրված մահճակալները):</p>
<p>Հարկավո՞ր է արդյոք</p>	<p>Ցուցակներում մտցվում են տնային կամ</p>

Հ Ա Ր Ց	Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն
<p>ցուցակներում մտցնել տանը (շինությունում) ընտանիքներով ապրող զինծառայողներին</p>	<p>համայնքի գրքում գրանցված ամբողջ բնակչությունը, անկախ ընտանիքի առանձին անդամների աշխատանքի վայրից:</p>
<p>Բնակչության ինչպիսի՞ թվաքանակ պետք է ցույց տալ գիշերօթիկ դպրոցում, որտեղ երեխաների մի մասն ապրում է տանը՝ ծնողների հետ</p>	<p>Գիշերօթիկ դպրոցում ստուգել՝ արդյո՞ք իսկապես երեխաների մի մասը մշտապես բնակվում է ընտանիքում ծնողների հետ և գիշերօթիկում գրանցված չէ: Եթե այդպես է, ապա ընտանիքում ապրող երեխաներին գիշերօթիկ դպրոցում ցույց տալ հարկավոր չէ:</p>